



«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

“ECOLOGICAL RIGHT”

ENVIRONMENTAL

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

ՀՀ ք. Երևան, Ավան-Առինջ 2/13շ., 30բն.

Հեռ՝ +37410621739; քջջ. +37491451320

e-mail: [art.grigorian@gmail.com](mailto:art.grigorian@gmail.com)

Avan-Arinj 2/13, apt 30, Yerevan, Armenia

tel: +37410621739; mob: +37491451320

e-mail: [art.grigorian@gmail.com](mailto:art.grigorian@gmail.com)

30 հունվարի 2014թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղ համայնքի ղեկավար  
Հակոբ Մկրտչյանին

Հարցում

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածները՝ խնդրում եմ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրել հետևյալի մասին՝

1. Ինչպիսի պայմանագրեր է Մելիքյուղ համայնքի հետ կնքել Մեզո Գոլդ ընկերությունը և 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարում է արդյոք պայմանագրերով նախատեսվող վճարումները (հողի հարկ, սոցիալական և այլ վճարումներ): Խնդրում եմ տրամադրել Մեզո Գոլդ ընկերության հետ կնքված պայմանագրերի պատճենները.
2. Արդյո՞ք ընկերությունը կատարել է համայնքի սոցիալական հարցերի լուծման վերաբերյալ տրված խոստումները (ջրագիծ, փողոցների լուսավորություն, ճանապարհների վերանորոգում և այլն).

3. Արդյո՞ք 2013 և 2014 թվականների ընթացքում Ձեր կամ համայնքի ավագանու կողմից Մեզո Գոլդ ընկերությանը տրվել է որևէ թույլտվություն կամ վերջինիս հետ կնքվել է որևէ գործարք:

«Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպության

նախագահ՝

Արթուր Գրիգորյան